

ԳԼՈՒԽ Բ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Միևնը իւր մոլեկան հեղեղը կը շարունակէր, քամին գանի կը տարուբերէր, եւ մարդոց շատ դիւրին չէր այդպիսի ժամանակին տնէ դուրս ելնելը. ուստի, երբ կէս-գիշերն (անցաւ եւ հազարի չափ նիղակաւորք ժողովեցւան Սարասեպ գիւղին դիմաց, որ դէպի Մուշ կը նայէր, (Էլ չի համբերեց Յովնան, եւ առջեւէն սկսաւ սահիլ փայտեայ ոտնամաններով, որ այդ լեռնան բնակչաց յատուկ էի ի վաղ ժամանակաց հետէ, որով չէն խրիոր ձիւնին մէջ): Ինք լաւ դիտել էր թէ քամին իրենց ետեւէն կը փչէր, ուստի այս էլ բաւական դիւրութիւն մ'էր այդ սոսկալի ճամփորդութեան՝ մանաւանդ, երբ գրեթէ ապահովութիւն կար ի չիք դարձնելու բոլոր այդ իսմայելեան բանակը՝ ամէն դժուարութիւն իրեն համար ուրախութիւն էր, եւ բոլոր Սասուն դիտէր թէ այդ մարդը յոգնիլ, վհատիլ չէր գիտէր, վտանգ զինքն երբեք ահաբեկել չէր, ուստի ինք կը սահէր եւ ետեւէն ամէնքը կը քայլէին. եւ վերջը, ըստ հին սովորութեան, այս ձիւն ի վրայի ճամփորդութեան մէջ կռունկներու պէս առջիները քիչ-քիչ ետ կը մնային, վերջիները առաջ կ'անցնէին: Տխուր լուսին առանց երեւելու աղօտ լոյս մը կը ձգէր երբեմն սպիտակ ձիւնին վրայ եւ ամէն սեւ նիւթն տեսանելի կ'ըներ՝ թէպէտ բան մը չի կար, որ ճերմկած չլինէր: Մեր խումբը լռիկ կը շարունակէր իր ճամփան, ժամերն կ'անցնէին, գիշերը կը կարճէր, արշալոյսը հեռու չէր, երբ յանկարծ մեր խմբին պարագլուխը, որ երբեք չէր նահանջեալ՝ կանգ առաւ եւ ամէն մարդ, որ նօթայ ետին էր, ինքնիրեն կը հարցնէր թէ ի՞նչ արգելք կրնայ լինի:

Յովնան իւր ճամփուն վրայ տեսաւ անսովոր ձիւնագեղ բարձրութիւն մը, առջի մտածութիւնը նիզակի հարուած մը տալ եղաւ, բայց շուտ մը խելաբերեց եւ նիզակին բունը երբ ձիւն ի դէպին մէջ մխեց՝ դիմադրութիւն մը զգաց, եւ մարդկանց աղաղակի ձայն, ձիոց փռնչել, գինուց շառաչիւն եւ ձեան դէպին ցիրուցան փլչիլ յայտնի եղաւ, ձեան տակէն չորս ձի եւ չորս մարդ դուրս եկան: